

---

---

ԻՐԱՆԱՀԱՅԵՐԻ ՆԵՐԳԱՂԹՆ ՈՒ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ  
(1946–1970-ական թվականներին)

ԱՐՄԵՆՈՒՅԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ, ՀԱՄԼԵՏ ՍԱՐԳՍՅԱՆ

*XX դ. երկրորդ կեսի ներգաղթը Խորհրդային Հայաստան հասարակական-քաղաքական կարևոր իրադարձություն էր ինչպես ողջ Սփյուռքի, այնպես էլ իրանահայության համար: Սփյուռքահայերի զանգվածային հայրենադարձության պատճառների թվում կարևորվում էր մի շարք երկրներում հայերի տնտեսական ու քաղաքական ծանր վիճակը և դիմումներն ուղղված Հայաստանի կառավարությանը՝ վերսկսելու 1936 թ. ընդհատված հայրենադարձությունը: Իրանը այն երկիրն էր, որտեղից զանգվածային ամենամեծ ներգաղթը եղավ Երկրորդ աշխարհամարտից անմիջապես հետո և հետագա տարիներին:*

*Իրանը հայկական հնագույն և մեծ գաղթօջախներից է: Այնտեղ հայ բնակչություն է եղել դեռևս մ. թ. ա. VI դարից: Որպես տեղաբնիկներ, հայերը վաղուց ի վեր ապրել են ներկայիս Իրանի հյուսիսային շրջաններում՝ Թավրիզ, Մարանդ, Ուրմիա (Կասպուտան), Խոյ (Հեր), Սալմաստ (Զարևանդ), Մակու (Արտազ), որոնք հայկական սկզբնաղբյուրներում հիշատակվում են Ատրպատական կամ Պարսկահայք և Ղարադաղ (Փայտակարան): Պատմության տարբեր ժամանակահատվածներում՝ Հայաստանից գերեվարված հազարավոր հայեր բնակեցվել են այս երկրի հարավարևմտյան շրջաններում: 1604–1605 թթ. Շահ Աբասի կազմակերպած բռնագաղթի (մեծ սուրգուն) հետևանքով Հայաստանի տարբեր շրջաններից 300 հազ. (որոշ աղբյուրներում 500 հազ.) հայեր տեղահանվեցին և բնակեցվեցին Իրանի հարավային շրջաններում, հիմնադրվեց Նոր Ջուղան: XVII–XIX դդ. հայ բնակչության մի մասը հարավային գավառներից աստիճանաբար փոխադրվում է կենտրոնական շրջաններ: Տարագաղթման այս գործընթացի հետևանքով Իրանի հայ գաղութը բաժանվեց երկու համայնքի. հյուսիսային՝ Թավրիզ կենտրոնով և հարավային՝ Նոր Ջուղա կենտրոնով: Այդ երկու համայնքները տարբերվում են էթնոմշակութային և լեզվաբարբառային առանձնահատկություններով: Երկրորդ աշխարհամարտի վերջին իրանահայության թիվն անցնում էր 100 հազարից: 1945 թ. նոյեմբերի 21-ին ներգաղթի մասին ԽՍՀՄ կառավարության ընդունած որոշումը<sup>1</sup> արագորեն տարածվեց նաև Իրանի հայաբնակ վայրերում: Ինչպես նշում են ներգաղթած բանասացները<sup>2</sup>, արձագանքը սկզբում բուռն չէր, քանի որ Թավրիզում և Հյուսիսային Իրանի այլ քաղաքներում լուրեր էին շրջում հայկական ինքնավարություն ստեղծելու մասին,*

---

<sup>1</sup> Տե՛ս «Սովետական Հայաստան», 2. XII. 1945:

<sup>2</sup> Ա. Ս տ ե փ ա ն յ ա ն. Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետ՝ ԴԱՆ), Մյունիք, 1974 թ.:

ինչի համար երաշխիք էին ծառայում Իրանում դեռևս 1941 թ. տեղակայված խորհրդային զորքերը: Մակայն 1946 թ. սկզբին այդ զորքերը հարկադրաբար դուրս բերվեցին Իրանից<sup>3</sup>, որին անմիջապես հետևեցին իրանահայերի ներգաղթի նախապատրաստման ու կազմակերպման աշխատանքները:

1945 թ. դեկտեմբերի 8-ին ստեղծվեց ՀԽՍՀ Ժողկոմխորհին առընթեր արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման ու տեղավորման կոմիտե: Միաժամանակ կազմավորվեց վերաբնակեցման վարչություն: Մրանց գործառույթները հստակ սահմանազատված էին. ներգաղթի կոմիտեն պետք է զբաղվեր սփյուռքահայերի հայրենադարձության կազմակերպման ու նրանց ընդունման խնդիրներով: Վերաբնակեցման վարչության խնդիրներն էին ներգաղթածների տեղաբաշխումը, բնակարանային ու աշխատանքային հարցերի կարգավորումը, նոր ավանների ու բնակելի տների կառուցումը<sup>4</sup>: ԽՍՀՄ տարածքում ներգաղթողների ընդունման կայաններ էին բացվել Բաթում, Ջուլֆա և Բաքու քաղաքներում: Իրանի կառավարությունն աշխատում էր անել այնպես, որպեսզի հայերի փոխադրումը երկրից զանգվածային արտագաղթի տեսք չունենար: Իրանահայերի ներգաղթի շրջանում կառավարության հարուցած արգելքները մասամբ պայմանավորված էին նաև այս հանգամանքով: Ավելորդ աղմուկից խուսափելու համար արտագաղթող հայերին ուղարկում էին 80–100 հոգանոց փոքր խմբերով: Փեհլևի նավամատուցից սովետական շոգենավերը հայերին տանում էին Բաքու, որտեղից էլ ցամաքային փոխադրամիջոցներով՝ Հայաստան: Մյուս ճանապարհը երկաթգիծն էր, որն անցնում էր Ջուլֆայով՝ ներգաղթողներին անմիջապես Հայաստան փոխադրելով<sup>5</sup>: Ջուլֆայի ընդունման կայանում ներգաղթողները երկու-երեք օր սպրում էին վազոններում կամ տեղի հյուրանոցում, որոնք զուրկ էին բնակության նվազագույն հարմարություններից: Մնվում էին Ջուլֆայի երկաթուղային կայանի ռեստորանում, որտեղ մթերքի գինը բարձր էր, և չկար անհրաժեշտ տեսականի<sup>6</sup>:

Հայրենադարձության մասին խորհրդային կառավարության որոշումը առաջին ողջունողներից էր Իրանի Ղազվին քաղաքի հայությունը: Նրանք այստեղ կայացած միտինգի 300 հայ ընտանիքների անունից հեռագիր ուղարկեցին Հա-

<sup>3</sup> Ստալինը չէր շտապում զորքերը դուրս բերել Իրանից, քանի որ ծրագիր էր նախապատրաստվում զենքով լուծել Արևմտյան Հայաստանի հողերը օրինական տերերին վերադարձնելու խնդիրը, որը չէր հաջողվել դիվանագիտական ճանապարհով: Համաձայն այդ ծրագրի՝ Թուրքիայի վրա հարձակում էր նախապատրաստվում երեք ուղղությամբ՝ Հայաստանից, Վրաստանից և Իրանից: Իրանից հարձակումն իրականացնելու նպատակով խորհրդային զորքերի հրամանատար էր նշանակվել Հովհ. Բաղրամյանը (տե՛ս Ս. Հ ո վ ի վ յ ա ն. Մրտաբաց խոստովանություններ և զգաստության հրավեր Սփյուռքի իմ պանդուխտ եղբայրներու և բույրերու, Պեյրութ, 1973, էջ 56–157): Բանասացների հաղորդած տեղեկությունները հաստատվեցին քաղաքական մեկնաբան Արտյոմ Երկանյանի «Ստալինի հայկական արշավը» հեռուստահաղորդման մեջ: Ծրագիրը չիրականացավ, և 1946 թ. ԱՄՆ նախագահ Հարրի Տրումենը վերջնագիր ներկայացրեց Խորհրդային Միությանը՝ զորքերը Իրանից դուրս բերելու մասին:

<sup>4</sup> Հ. Մ է լ ի բ ու է թ յ ա ն. Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը, Երևան, 1985, էջ 177–178:

<sup>5</sup> Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 326, ց. 2, գ. 35:

<sup>6</sup> Նույն տեղում, գ. 135:

յաստան՝ իրենց գոհունակությունը հայտնելով ներգաղթի թույլատրման կապակցությամբ:

Թեհրանում կազմավորվեց երեսունմեկ անձից բաղկացած ներգաղթին աջակցող կոմիտե՝ Ռոման Բասնի գլխավորությամբ, որի կազմում ընդգրկված էին իրանահայ մտավորականության ներկայացուցիչներ Հայկ Գարագաշը, Ղազար Միմնյանը, Աշոտ Աբգարյանը, Արտաշ Այրիյանը, Սուրեն Սևոյանը և ուրիշներ: Կոմիտեի պատվավոր նախագահն էր Իրանահանդակական թեմի առաջնորդ, եպիսկոպոս Վահան Կասյանը<sup>7</sup>: Ներգաղթի նախապատրաստման աշխատանքներին հետևելու համար իր հանձնախմբով Իրան ժամանեց նաև Խորհրդային Հայաստանի կառավարության ներգաղթի գծով լիազոր Ռ. Քալանթարը:

Թեհրանի կոմիտեն իր բաժանմունքներն ուներ Նոր Ջուղայում, Արաքում, Ռեշտում, Մեշհեղում, Համադանում, Ահվազում, Սպահանում և հայաբնակ այլ վայրերում: Տեղական ենթակոմիտեները զբաղվում էին ոչ միայն ներգաղթողների հաշվառմամբ ու ցուցակագրմամբ, այլև՝ ներգաղթի ֆոնդ ստեղծելով: Այդ գործին նպաստում էին Հայ բարեգործական ընդհանուր միության (ՀԲՄ) Իրանի մասնաճյուղը և ունևոր գաղութահայերը:

Այսպես, Չարմահալ գավառի ունևոր խավն ապահովեց ողջ գավառի փոխադրման ծախսերը<sup>8</sup>: Աբադան քաղաքում գորգի աճուրդից ստացված ողջ գումարը (29 470 ռիալ) տրամադրվեց ներգաղթի ֆոնդին: Միրողական խմբերը մշակութային ցերեկույթ-երեկույթներ էին կազմակերպում, պիեսներ բեմադրում՝ ամբողջ հասույթը ներգաղթի ֆոնդին տրամադրելով<sup>9</sup>:

Հայաստանի կառավարության մշակած նախնական ծրագրի համաձայն, 1946 թ. պետք է հայրենադարձվեին 8 930 ընտանիք կամ 28 800 մարդ, այդ թվում Իրանից՝ 4 930 ընտանիք կամ 15 800 մարդ, սակայն այդ տարի նախատեսվածից քիչ ընտանիքների հաջողվեց ներգաղթել Հայաստան (3 870 ընտանիք):

Ներգաղթեցին Սպահանի նահանգի Փերիայի գավառից: Փերիան ամենամեծ հայաբնակ գավառն էր: Մինչև 1946 թ. ներգաղթն այն ուներ 24 հայաբնակ գյուղ՝ 16 հազար բնակչությամբ<sup>10</sup>: Փերիայից ներգաղթողների ցուցակագրությամբ զբաղվում էր Նոր Ջուղայի ենթակոմիտեի հանձնաժողովը: Ներգաղթեց Ներքին Փերիայի Չիգյանի և Վերին Փերիայի Սանգիբարանի գավառակների ութ գյուղերի բնակչությունը.

	Բնակավայրեր	Ընտանիք	Մարդ
1	Ադիրգյան	45	329
2	Ազնավուլ	61	444
3	Բժկերտ	38	259
4	Դաջան	44	235
5	Խոջիդալա	47	322
6	Մազրաբատ	30	178

<sup>7</sup> Հ. Փ ա հ լ և ն յ ա ն. Իրանահայ համայնքը (1941-1979 թթ.), Երևան, 1989, էջ 182:

<sup>8</sup> Ա. Մ ա ր յ ա ն. Պատմություն Չարմահալ գավառի, Թեհրան, 1980, էջ 425:

<sup>9</sup> «Վերածնունդ», Թեհրան, 19. VII. 1946:

<sup>10</sup> Հ. Փ ա հ լ և ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 35:

7	Նոր Մուղան	4	38
8	Սելբարդի ընդամենը	39 308	205 2 010

Այս գյուղերից ներգաղթածների վերաբնակեցման համար որոշված էին Մասիսի, Հոկտեմբերյանի, Էջմիածնի շրջանները: Սակայն բոլորին հնարավոր չեղավ տեղավորել այդ բնակավայրերում, ուստի նրանց մի մասը տեղաբաշխվեց Հրազդանում, Աբովյանում, Կիրովականում և Լենինականում<sup>11</sup>:

Չարմահալ գավառից ներգաղթի կազմակերպման հարցերով ևս զբաղվում էր Նոր Ջուղայի ենթակոմիտեն: Մինչև 1946 թ. գավառն ուներ ինը հայաբնակ գյուղ՝ 2750 բնակչությամբ: Ներգաղթեցին հետևյալ վեց գյուղերի բնակչությունը.

	Բնակավայրեր	Ընտանիք	Մարդ
1	Վերին Քոնարք	60	280
2	Ներքին Քոնարք	34	139
3	Լիվասյան	40	160
4	Մամուռան	30	155
5	Աղբուլաղ	55	280
6	Սինազան	35	250
	ընդամենը	254	1264

Հայաստանում լիվասյանցիները բնակություն հաստատեցին Մեղրիում, Շվանիձորում և այլուր: Մամուռանից գաղթածները՝ Արարատում ու շրջակա գյուղերում, սինազանցիները՝ Հոկտեմբերյանում, աղբուլաղցիները՝ Ալափարս, Արզական, Բջնի գյուղերում, վերին ու ներքին քոնարքցիները՝ Հոկտեմբերյանում ու շրջակա գյուղերում<sup>12</sup>:

Քյարվանդի գավառի Դովլաթարաղ գյուղն ուներ 101 ընտանիք, բոլորը լքեցին իրենց հարազատ օջախները: Վերին Քոնարք գյուղում կար 96 ընտանիք, միայն մեկը մնաց գյուղում: Լիովին դատարկվեցին նաև Ջափլաղ գավառի 12 հայկական գյուղերը<sup>13</sup>:

Բուրվարի գավառի 20 գյուղերից հայրենիք գաղթեց միայն Փահրա, Շավրավա, Անավշ, Բուրք, Չարբազ, Բախտիար, Քանսորիսի գյուղերի հայ բնակչությունը (ընդամենը՝ 1 984 մարդ)<sup>14</sup>: Այդ գյուղերի բնակիչներն իրենց անշարժ կայքը չհասցնելով վաճառել՝ հանձնեցին Արաքի ենթակոմիտեի տնօրինությանը: Հիշյալ գյուղերի բնակիչներին Հայաստանից ստացված փոխադրավարձով բեռնա-

<sup>11</sup> Ծ. Ջ ա թ գ ա թ յ ա ն. Պարսկաստանի Փերիա գավառի ազգագրական նյութեր. - ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի արխիվ (այսուհետ՝ ՀԱԻ ԱԲԱ), ֆ. 28:

<sup>12</sup> Ա. Ղ ա թ ա թ ա ն յ ա ն յ ա ն. Իրանի Չահարմահալ գավառի հայերի ազգագրությունը. - ՀԱԻ ԱԲԱ, ֆ. 93, մաս III, էջ 902-903, Ծ. Ջ ա թ գ ա թ յ ա ն. նշվ. աշխ., էջ 7:

<sup>13</sup> Նույն տեղում:

<sup>14</sup> Ա. Շ ա հ թ ա զ յ ա ն. Նշխարներ Բուրվարի գավառի պատմության և ազգագրության, Թեհրան, 2003, էջ 234-235:

տար մեքենաներով ճանապարհեցին Արաք, այնտեղից էլ գնացքով՝ Հայաստան: Մնացած 13 գյուղերի բնակչությունը թեպետ ցուցակագրվել էր, սակայն Իրանի կառավարությունը կասեցրեց գաղթը: Այդ գյուղերն էին՝ Ասնա, Աբարիք, Մուղանաք, Գուրան, Սանգսեֆիդ, Գովզ, Գայիքան, Ղարաքեահրիզ, Խորզընդ, Ֆարաջարադ, Դեհնակ, Բահմանարադ և Նասրարադ: Նրանք ևս իրենց ողջ ունեցվածքը՝ տունն ու կայքը, կալ ու կուտը, անասունները նախապես ցածր գնով վաճառած պարսիկ նորեկ հողագործներին, կազմ ու պատրաստ սպասում էին ճանապարհվելու հայրենիք: Ներգաղթը ձգձգվեց և ակնկալված օրն այդպես էլ չեկավ: Հիշյալ գյուղերի բնակիչները, զրկվելով ողջ ունեցվածքից, տնանկ և ընչազուրկ, աղետալի վիճակի մեջ ընկան:

Հիշյալ գավառների բնակչությունը Շահ Աբասի գաղթեցրած հայերի սերունդներն էին, որոնց համար այս տեղաշարժը, ըստ էության, հայրենադարձություն էր, թեպետև նրանք հասցրել էին արմատակալել և ցավով էին բաժանվում իրենց ծննդավայրից:

1946 թ. ներգաղթ կատարվեց նաև Ղարադաղից<sup>15</sup>: Նշենք, որ Ղարադաղի բնակչության զգալի մասը ժամանակին գաղթել էր Ղարաբաղից ու Ջանգեզուրից: Աշխարհագրական մեկուսի դիրք ունենալու շնորհիվ նրանք պահպանել էին իրենց կենցաղի ու սովորույթների ուրույն նկարագիրը<sup>16</sup>: Ներգաղթեցին Ղարադաղի Դիզմար գավառակի Խունագահ, Ղուլուղի, Մարդու, Ղշլաղ, Իրգութին և Աղաղան գյուղերից, Հասանով գավառակի Ողան և Նեփեշտ գյուղերից, Մինջևան գավառակի Վինա, Ամրադուզ, Քարագլուխ, Սևահող, Վարդանաշեն գյուղերից, Քեյվան գավառակի Սըզըն, Ղասումաշեն, Դուզավդարա, Բերդ, Միրուն, Նուրիշչին, Արշաֆ, Մըհդավա գյուղերից<sup>17</sup>:

1946 թ. ներգաղթեցին նաև Իրանի մի շարք քաղաքներից<sup>18</sup>:

Բնակավայրեր	Մարդ
Թավրիզ և շրջակայք	5328
Արաքս, Քեապաղ, Քեամարա	313
Թեհրան	626
Ղազվին	359
Համադան	225
Մեշհեդ	610
Քերմանշահ	30
Նոր Ջուղայ	1537
Քեավանդ	1320
Արաք	5942

<sup>15</sup> Հ. Հ. Ն. Վ. Ա. Ե. Փ. Յ. Ա. Ղարադաղի հայերը. 1. ազգագրություն, Երևան, 2009, էջ 156–157:

<sup>16</sup> Ա. Ա. Լ. Ա. Յ. Ն. Յ. Ա. Ղասումություն հայ գաղթականության, հ. Գ, Գահիրե, 1961, էջ 226–227:

<sup>17</sup> Տե՛ս Հ. Հ. Ն. Վ. Ա. Ե. Փ. Յ. Ա. Ղարադաղի հայերի ազգագրությունը.– ՀԱԲ ԱԲԱ, ֆ. 75:

<sup>18</sup> Մ. Ջ. Ա. Բ. Գ. Դ. Յ. Ա. Նշվ. աշխ., էջ 7:

Այսպիսով, 1946 թ. Իրանից Հայաստան ներգաղթեց ընդամենը 20 հազ. 597 մարդ, ներգաղթն ընդհատվեց Իրանի կառավարության հարուցած խոչընդոտների հետևանքով<sup>20</sup>:

Հայաստանում հաստատված իրանահայերի վիճակի, խնդիրների մասին պատկերացում կազմելու համար կառավարությունը հատուկ խմբեր ստեղծեց: Արդյունքում պարզվեց, որ առանձնապես ծանր է Արտաշատի, Էջմիածնի, Վեդու, Չանգիրասարի (Մասիս) շրջաններում, «Արարատ» տրեստի ու «Պահածոտրեստի» սովխոզներում տեղավորված Իրանից ներգաղթած գյուղացիական տնտեսությունների վիճակը: Գյուղերից հայրենադարձված հայերի մեջ նկատվել էր տիֆով ու տրախոմայով հիվանդության դեպքեր, որոնք բժիշկների ջանքերի շնորհիվ կանխվեցին:

Հայաստանի կառավարությանն առնթեր ներգաղթի կոմիտեն, հաշվի առնելով Իրանում ու Հունաստանում ապրող հայերի վատ վիճակը, որոշեց 1947 թ. ներգաղթ կազմակերպել հենց այդ երկրներից<sup>21</sup>:

1947 թ. նախատեսված էր շուրջ 25 հազ. մարդ ընդունել Իրանից: Սակայն այնպես պատահեց, որ ոչ մի հայ չվերադարձավ հայրենիք, քանի որ Իրանի կառավարությունը, չնայած նախնական համաձայնությանը, արգելեց հայերի հայրենադարձությունը: Տասնյակ հազարավոր մարդիկ, որոնք հրաժարվել էին իրանահայատակությունից և սպասում էին ներգաղթելու իրենց հերթին, այդպես էլ մնացին անորոշ վիճակում, քանի որ չէին կարող օգտվել աշխատանքի, սեփականության առք ու վաճառքի իրավունքից: Իրանի իշխանությունները խոստանում էին որոշ արտոնություններ, եթե նրանք հրաժարվեն արտագաղթից: Բանասացների պատմելով՝ Թեհրանից գավառներ եկած և գյուղ առ գյուղ շրջող կոմիտեի անդամները հավատացնում էին, որ շուտով հայրենիք են մեկնելու: Շատերը, որ դժվարությամբ գույք էին ձեռք բերել, կրկին վնասով վաճառեցին և նորից հուսախաբ եղան<sup>22</sup>:

Ծանր վիճակ ստեղծվեց գյուղական բնակչության համար, որոնք շտապել էին վաճառել տուն ու տեղ: Խորհրդային Հայաստանում Ներգաղթի կոմիտեի անդամները փորձում էին նրանց տեղավորել նոսրացած կամ դեռևս չբնակեցված գյուղերում, տեղի էին ունենում ներքին տեղաշարժեր. այսպես՝ Բուրվարի գավառի Աբարիք գյուղից 16 տուն տեղափոխվեցին Փերիայի Խոյզան գյուղ, Գովզ և Ազնա գյուղերից՝ Ագարջրիք, Ղարաքյահրիզ, Ֆարաջաբադ, Դեհնով և Խորզընդի գյուղերից՝ Քյեարաջի մոտակա ոչ հայաբնակ գյուղերը: Մնացած գյուղերը

<sup>19</sup> Հարկ է նշել, որ աղյուսակում բերված ընդհանուր թիվը գուտ քաղաքային բնակչությանը չէր, քանի որ, ինչպես ասվել է, ներգաղթի ձգձգման հետևանքով քաղաքներում կուտակվել էր գավառների բնակչությունը:

<sup>20</sup> ՀՀԱԱ, ֆ. 362, գ. 14, թ. 30-39:

<sup>21</sup> Հ. Մ է լ ի ք ու է թ յ ա ն. նշվ. աշխ., էջ 218-227: Ըստ Փահլևանյանի, այնուամենայնիվ 1947 թ. Իրանից ներգաղթեց 2 646 մարդ. տե՛ս Հ. Փ ա հ լ և ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 73:

<sup>22</sup> Ա. Ս տ է փ ա ն յ ա ն. ԴԱՆ, Էջմիածին-Հոկտեմբերյան, 1985:

գրադեցրել էին հարևան գյուղերից եկած պարսիկները<sup>23</sup>: Թեհրանում, Թավրիզում կուտակված հայ բնակչության դիմումներն ուղղված Իրանի կառավարությանը՝ հող ձեռք բերելու ու աշխատելու նպատակով, մնացին անպատասխան: Նրանց մի մասը հաստատվեց այն գյուղերում, որոնք պարսիկ գյուղատերերի սեփական հողերի վրա էին՝ պայմանով, որ հայերն ու պարսիկները համատեղ միևնույն գյուղում զբաղվեն հողագործությամբ, քանի որ հայ հողագործները գրկվել էին գյուղատերերի վստահությունից և ստիպված համաձայնեցին: Մյուս հիմնական մասի համար ՀԲԸՄ-ն վրանային ճամբար հիմնեց Թեհրանի շրջակայքում՝ խորհրդային զորքերի նախկին տեղակայման վայրում, մինչև հարցի հետագա լուծումը:

1947 թ. Խորհրդային Հայաստանի կառավարությունը որոշում կայացրեց ընդունել 20 հազ. մարդ, սակայն Իրանից այդ թվերին (1947-1949 թթ.) հայրենադարձություն տեղի չունեցավ: Չանգվածային հայրենադարձությունն ավարտվեց 1949 թ.: Թեհրանամերձ ճամբարում բնակվողների մի մասը ՀԲԸՄ-ից նպաստ ստանալով՝ ցրվեց քաղաքի արվարձանները՝ աշխատանքի ու ապրուստի որոնումներով: Մնացածները, դիմելով տեղի խոշոր կալվածատեր Սահրաբիին, իրավունք ստացան Թեհրանից բավական հեռու գտնվող Բանջաթաբադ կոչվող տարածքում հյուղակներ կառուցել<sup>24</sup>:

1950 թ. հետո Հայաստանի կառավարությունը թույլ տվեց անհատական հայրենադարձությանը: 1950-1961 թթ. տարբեր երկրներից անհատական կարգով Հայաստան ներգաղթեց շուրջ 4 հազ. մարդ<sup>25</sup>: Սակայն հարցը դրանով չէր լուծվում: Քաղաքներում, մասնավորապես՝ Թեհրանում, կուտակված հայ բնակչության վիճակը շարունակում էր մնալ տագնապալի, քանի որ աշխատանք գտնելն անհնար էր, իսկ վաճառած տունն ու հողատարածքը վերադարձնելն՝ անհույս: Հայաստանի կառավարությունը բազմաթիվ դիմում-խնդրանքներ էր ստանում՝ ներգաղթի թույլտվության համար: Հաշվի առնելով սփյուռքահայերի բուռն ցանկությունը՝ Խորհրդային Հայաստանի ղեկավարների միջնորդությամբ 1961 թ. օգոստոսի 12-ին ԽՍՀՄ կառավարությունը որոշում ընդունեց Մերձավոր և Միջին Արևելքի, ինչպես նաև ամերիկյան մայրցամաքի երկրներից հայերի զանգվածային նոր հայրենադարձություն թույլատրելու մասին:

Իրանում վերաբացվեցին ներգաղթի կումիտները և սկսվեցին ցուցակագրությունները: Իրանահայերի ներգաղթի նոր ալիքը հանդիպեց կառավարության հարուցած նոր խոչընդոտների, դժվարություններ էին հարուցվում փաստաթղթերի ձևակերպման հարցում՝ ձգձգելով երկար ամիսներ:

Իրանահայաստակությունից հրաժարվողներին պարտադրում էին 7-10 օրվա ընթացքում հեռանալ երկրից, արգելքներ էին ստեղծվում շարժական գույքի տեղափոխման խնդրում ևս: Այդ ամենի հետևանքով, 1962 թ. ցուցակագրված 3000-

<sup>23</sup> Ա. Շ ա հ բ ա գ յ ա ն. նշվ. աշխ., էջ 242-243:

<sup>24</sup> 1954 թ. Իրանի կառավարությունը որոշեց այդ տարածքի հյուղակները քանդել և հայերին տեղափոխել Խուզիստանի նահանգ, սակայն հայոց թեմական խորհրդի նախագահ Արտաշես Բաբայանի ջանքերով այդ որոշումը չիրագործվեց ու հայերին տեղափորեցին մայրաքաղաքի զանազան թաղամասերում (տե՛ս Ա. Շ ա հ բ ա գ յ ա ն. նշվ. աշխ., էջ 243):

<sup>25</sup> Հ. Մ ե լ ի բ ս ե թ յ ա ն. նշվ. աշխ., էջ 188:

ի փոխարեն (750 ընտանիք) ներգաղթեց ընդամենը 58 մարդ<sup>26</sup>: 1963 թ. տասնվեց գաղթօջախներից ընդունվել էր 2 304 մարդ, որից 412 ընտանիք կամ 1 732 մարդ՝ Իրանից: 1963 թ. հետո Իրանից ներգաղթած հայերի մեծ մասը Փերիայի գավառի գյուղերից էին և թեհրանաբնակ հայերից, որոնք տարիներ առաջ Թեհրան էին եկել տարբեր գավառներից: 1964–1965 թթ. նախատեսված 4000 մարդու փոխարեն ոչ մի իրանահայ չհայրենադարձվեց՝ Իրանի իշխանությունների հարուցած արգելքների և Իրանում ստեղծված ներքաղաքական լարվածության հետևանքով: 1966–1967 թթ. ներգաղթեց 88 մարդ: Իրանից 1962–1967 թթ. ներգաղթեց ընդամենը 2 699 մարդ<sup>27</sup>, այն դեպքում, երբ միայն Թեհրանում, 10 օրվա ընթացքում, 9 000 մարդ էր ցուցակագրվել: Ներգաղթի ձգձգման պատճառով 1966 թ. Հայաստանի ղեկավարությունը (ՀԿԿ կենտկոմի քարտուղար Ա. Քոչինյան, Գերագույն խորհրդի նախագահ Բ. Մուրադյան) հաստուկ նամակով դիմեց ԽՄԿԿ-ին ու միութենական կառավարությանը՝ հայրենադարձության մասին ընդունված որոշման ժամկետը երկարաձգելու միջոցառությամբ:

1968 թ. Խորհրդային Հայաստանի կառավարությունը Թեհրան է գործուղում հայրենադարձության հանձնաժողովի նախագահ Ալ. Կիրակոսյանին՝ երկու պետությունների միջև իրանահայերի ներգաղթի շուրջ բանակցություններ վերսկսելու առաքելությամբ: Հենց նույն թվին էլ ներգաղթեցին Փերիայի գավառի Հազարջորի ու Բոլորան գյուղերի ծայրահեղ թշվառության մեջ գտնվող 8000 հայեր, որոնք վերաբնակվեցին Աբովյանի, Արտաշատի, Ապարանի շրջաններում, Հրազդանում, Սպիտակում, Կիրովականում<sup>28</sup>:

1969 թ. ներգաղթած 896 ընտանիքից (4 516 մարդ) 857-ը (4 365 մարդ) Իրանից էր: 1967–1971 թթ. Փերիայի գավառի գրեթե ողջ բնակչությունը աստիճանաբար գաղթեց Հայաստան: Չնայած Հայաստանի և Իրանի կառավարությունների միջև ձեռք բերված համաձայնությանը, տեղական իշխանությունները շարունակում էին ամեն կերպ խոչընդոտել հայերի արտագաղթին: Եթե արգելքներ չլինեին, ապա եկողների թիվն ավելի մեծ կլիներ: Հայրենադարձների փաստաթղթերի ձևակերպման հարցում զգալի դժվարություններ կային հատկապես Իրանի գյուղական շրջաններում. այդ են վկայում Սպահանի նահանգի Հեզարջորի, Բոլորան, Շուրիչկան և այլ գյուղերի հայերի բողոքները՝ ուղղված տեղական ներգաղթյալներին: Լուրջ դժվարությունների էին հանդիպում նաև Թավրիզի, Ղարադաղի և այլ վայրերի հայերը<sup>29</sup>: Արդյունքում ներգաղթը երկարաձգվեց՝ տևելով մոտ երկու տասնամյակ:

1970 թ. հայրենադարձվել է ընդամենը 812 ընտանիք կամ 4 019 մարդ, ընդ որում, խմբային հայրենադարձություն է իրականացվել միայն Իրանից՝ 766 ընտանիք կամ 3 866 մարդ, որից 729 ընտանիք կամ 3 520 մարդ՝ քաղաքային և 83 ընտանիք կամ 499 մարդ՝ գյուղական բնակավայրերից: Հաջորդ՝ 1971 թ. 2 885

<sup>26</sup> Նույն տեղում:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 255–272:

<sup>28</sup> Տե՛ս Ա. Լ. Կիրակոսյանի ն. Մայրամուտի շեմին. հուշեր և մտորումներ, Երևան, 2002, էջ 131:

<sup>29</sup> Հ. Մեղիքյանի նշվ. աշխ., էջ 293:



հայրենադարձվածներից 2 715-ը Իրանից էր: 1972 թ. անհատական կարգով հայրենիք վերադարձան 567 ընտանիք կամ 2 734 մարդ: 1974 թ. անհատապես և ոչ մեծ խմբերով հայրենիքում հաստատվեցին 241 ընտանիք կամ 1 124 մարդ: Այս ամենից հետո Իրանում դեռևս 12 600 մարդ ցուցակագրված էր ու սպասում էր վերադարձի:

Ըստ Հ. Մելիքսեթյանի՝ 1962–1982 թթ. ընթացքում աշխարհի 30 երկրներից, ընդհանուր առմամբ, հայրենադարձվել է 31 920 մարդ (6 795 ընտանիք): Իրանից ներգաղթողների թիվը կազմում էր 24 283 մարդ կամ 5 039 ընտանիք: Ամենից շատ հայրենադարձներ եկել են 1969 թ.՝ 4 516 մարդ, իսկ ամենաքիչը 1981 թ.՝ 140 մարդ<sup>30</sup>:

Հարկ է նշել, որ երրորդ փուլի<sup>31</sup> զանգվածային հայրենադարձությունը, ըստ էության, տևել է մինչև 1972 թ.: Հետագա տարիներին արտասահմանից Հայաստան են ներգաղթել միայն անհատական թույլտվությամբ:

Ներգաղթած իրանահայերի տեղաբաշխման հարցում եղան վրիպումներ ու կամայականություններ, ինչը դժգոհություններ առաջացրեց: Բանասացներից շատերը, հիշելով ներգաղթի տարիները, նշում էին, որ նախապես իրենց խոստացել էին վերաբնակեցնել գյուղերով, որով ավելի հեշտ կլինեք ընտելանալ նոր միջավայրին, սակայն ցրեցին Հայաստանով մեկ, որը ծննդավայրի կարոտախտի տրտունջներ առաջացրեց<sup>32</sup>: Մա ինքնին հասկանալի է, քանի որ ներգաղթը միայն բնակավայրի ու կլիմայի փոփոխությունն չէր: Մարդիկ հայտնվել էին միանգամայն նոր, անծանոթ միջավայրում, որտեղ իշխում են քաղաքական այլ կարգեր, բարքեր ու սովորություններ, որոնց պետք էր հարմարվել, այսինքն՝ սպասվում էր ադապտացիայի մի շրջան, որին նախապատրաստված չէին:

Ներգաղթած իրանահայերի ճնշող մեծամասնությունը գյուղական բնակիչներ էին՝ հողագործներ, այգեգործներ, կային նաև մեղվապահներ: Նրանք, ում տեղաբաշխեցին Հայաստանի սակավահող շրջաններում, չկարողանալով հարմարվել տեղական պայմաններին, այդ և հետագա տարիներին տեղափոխվեցին այլ վայրեր, որտեղ առավել նպաստավոր պայմաններ կային հողագործությամբ զբաղվելու:

Իրանի քաղաքային հայ բնակչությունը առևտրականներ ու արհեստավորներ էին՝ հյուսներ, դարբիններ, գորգագործներ, ժամագործներ, ոսկերիչներ և այլն<sup>33</sup>: Ոսկերիչների պահանջարկը քիչ էր հետպատերազմյան շրջանում, ու նրանք ստիպված էին այլ զբաղմունքներ գտնել: Նրանց պահանջարկն առաջացավ 1960–1970-ականներին, երբ խորհրդային երկրում կյանքն անհամեմատ բարե-

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 296–299:

<sup>31</sup> XX դ. հայրենադարձությունը բաժանվում էր երեք փուլերի՝ 1921–1936 թթ., 1946–1949 թթ. և 1960–70-ական թվականներ:

<sup>32</sup> Ա. Մ տ է փ ա ն յ ա ն. ԴԱՆ, Հոկտեմբերյան, 1973 թ.:

<sup>33</sup> Ըստ ֆիլիս նշում է, որ հայ արհեստավորները միշտ բարձր են գնահատվել Պարսկաստանում, նա հատկապես առանձնացնում էր ոսկերիչներին: Հնագույն ժամանակներից շահի դրան զարգաբարձին (ոսկերչապետ) միշտ հայ է եղել: Այդ արհեստավորներն արժանացել են խանի աստիճանի և նրանց տրված արտոնությունները փոխանցվել են սերնդեսերունդ. տե՛ս Ը ա ֆ ֆ ի. Հայոց ազգաբնակչությունը Պարսկաստանում. – Երկեր, հ. 9, Երևան, 1958, էջ 138–139:

կեցիկ դարձավ: Մինչև ներգաղթը Իրանում կային զբաղմունքի և արհեստագործության բնագավառներ, որտեղ հայերն ունեին սահմանափակ իրավունքներ: Այսպես, հայ ուսուցիչն իրավունք չուներ դասավանդել մահմեդական երեխաներին: Սահմանափակումներ կային և՛ հացագործի, և՛ մսագործի մասնագիտություններում և առհասարակ սննդի պատրաստման ու վաճառքի գործում, քանի որ շարիաթն արգելում էր մահմեդականին քրիստոնյայի պատրաստած սնունդն ընդունել<sup>34</sup>:

1946–1970 թթ. Իրանից ներգաղթած քաղաքային բնակչության մեջ քիչ չէին և մտավորականության ներկայացուցիչներն ու մշակույթի գործիչները, որոնք իրենց ավանդը ներդրեցին հանրապետության մշակութային կյանքում ու գիտության բնագավառում<sup>35</sup>:

1946–1970 թթ. արտագաղթի հետևանքով իրանահայ գաղթօջախում տեղի ունեցան նկատելի փոփոխություններ: Դատարկվեցին շատ գյուղեր: Նոսրացած գյուղական բնակչությունը ցրվեց Իրանի տարբեր գավառներում: Շարժում սկսվեց դեպի Իրանի արդյունաբերական կենտրոնները, հատկապես մայրաքաղաք Թեհրան: Այդ տարիներին, հատկապես 1947 թ. ներգաղթի անսպասելի ընդհատումից հետո, շատերը սնանկացան և ընչազուրկ դարձան՝ տուժելով և նյութապես, և բարոյապես. մեծ դժվարություններով ու տարիների ընթացքում միայն մի մասին հաջողվեց վերականգնել կորցրածը:

1946–1947 թթ. Հայաստան ներգաղթածների (ոչ միայն իրանահայերի) վիճակը նույնպես բարվոք չէր, հատկապես, հետպատերազմյան տարիներին: Առավել բարվոք էր 1960–1970-ականներին ներգաղթածների վիճակը, երբ երկրում անհամեմատ բարենպաստ պայմաններ կային մարդկանց նոր խմբաքանակ ընդունելու: Սակայն թե նախորդ և թե վերջին փուլում ներգաղթածները պետք է անցնեին հարմարվելու (ադապտացիա) դժվարին ուղի՝ հաղթահարելով խորհրդային քաղաքական համակարգերից բխող գաղափարական, մտածելակերպի, պատկերացումների տարբերությունները, կենցաղային դժվարությունները, բարոյահոգեբանական բարդույթը և այլն:

<sup>34</sup> XIX դ. Պարսկաստանում հայերին արգելվում էր նաև կաշեգործությամբ ու կոշկակարությամբ զբաղվել: Բնչպես սնունդը, այնպես էլ կաշին, քրիստոնյայի ձեռքում պղծված էր համարվում և շարիաթի սահմանափակումով անընդունելի էր մահմեդականի համար: Ընթացիկ այս առիթով նշում է, որ խորշելով հայ կոշկակարի կարած կոշիկներից, պարսիկները չէին խուսափում հագնել եվրոպական արտադրության կոշիկներ, մոռանալով, որ նրանք նույնպես քրիստոնյաներ են: Սահմանափակումներ կային նաև սափրիչի մասնագիտության մեջ: Քրիստոնյան իրավունք չուներ սափրել մահմեդականին և սափրվել նրա մոտ. տե՛ս նույն տեղում, էջ 139–140:

Մեր օրերում Իրանից ժամանող հայերը նշում են, որ սննդամթերքի պատրաստման ու վաճառքի հարցում հայերի նկատմամբ եղած սահմանափակումները ներկայումս գրեթե վերացել են, և միայն մոլեռանդ մահմեդականներն են խուսափում հայի խանութ կամ սրճարան մտնել: Այս առումով, կարծում ենք, ուշագրավ է և այն իրողությունը, որ ներկայումս Հայաստանում հաստատված իրանահայերը գերադասում են աշխատել հենց սննդի առաքման ու սպասարկման ոլորտում, հավանաբար, այդ կերպ հաղթահարելով ժամանակին ունեցած հոգեբանական բարդույթը (Ա. Մ տ է փ ա ն յ ա ն. ԴԱՆ, Երևան, 2000–2008թթ.):

<sup>35</sup> Տե՛ս և Բ. Չ ո լ գ ա յ ա ն. Հայրենադարձ իրանահայ դեմքեր, Երևան, 1997:

*Իրանահայերի ինչպես և Սփյուռքի մյուս հաստիքների ներգաղթի շնորհիվ, Հայաստանն ունեցավ բնակչության զգալի աճ, ձեռք բերեց հմուտ մասնագետներ և մտավորական ներուժ:*

ИММИГРАЦИЯ ИРАНСКИХ АРМЯН И ВОПРОСЫ ПЕРЕСЕЛЕНИЯ  
(1946–1970-е гг.)

*АРМЕНИУИ СТЕПАНЯН, ГАМЛЕТ САРГСЯН*

Р е з ю м е

Иммиграция армян во второй половине XX в. являлась большим политико-общественным событием для всей армянской диаспоры, а также для Армении. Самая большая по количеству иммигрирующих репатриация была из Ирана, в частности, в силу сложившейся сложной политико-экономической обстановки в стране в период после Второй мировой войны и в 1960-е годы. В 1946 г. иммигрировали из многих сел провинций Перия, Чармахал, Кярванд, Бурвар, а также из Карадаха. Только за этот год из Ирана прибыло 20598 человек, что составляет высокий процент в общем числе иммигрантов из разных стран (около 100 тысяч чел.). На 1947 г. иранские власти, нарушив взаимосоглашение, запретили выезд из страны. Внезапное прекращение репатриации создало сложную ситуацию для армян, которые уже продали все имущество и отказались от гражданства, тем самым лишившись всяких юридических прав. Съехавшиеся из разных провинций в Тегеран армяне впоследствии разъехались по городам и селам Ирана в поисках работы и жилья. В 1950-е годы в Армению иммигрировали только по частным визам. Ситуация оставалась неизменной до начала следующего этапа армянской репатриации (1960–1970 гг.). Репатриация армян из Ирана снова сопровождалась препятствиями со стороны правительства Ирана, тем не менее за 1960–1970-е гг. из Ирана в Армению прибыло 24283 армян.

IMMIGRATION OF IRANIAN ARMENIANS AND PROBLEMS OF  
RESETTLEMENT (the 1946s–1970s)

*ARMENOUHI STEPANYAN, HAMLET SARGSYAN*

S u m m a r y

The immigration of Armenians in the second half of the 20<sup>th</sup> century was a great political and social event for all Armenian Diaspora and for Armenia, too. The greatest repatriation of immigrants was from Iran, in particular, because of the complicated political and economical situation in the country in the period after the WWII and in the 1960s. In 1946 people immigrated from many Armenian villages of Peria, Tcharmahal,

---

Karvand, Burvar provinces and also from Gharadagh. Only in 1946 20.598 people immigrated from Iran. This was the 22.9% of the total number of immigrants (89.780) and was the highest compared with the number of immigrants from other countries. In 1947, despite the previous agreement, the Iranian government forbade the immigration of Armenians from Iran. At the beginning of the 1947s thousands of people who had resigned the Iranian citizenship and were waiting for their turn to return to their motherland were still left waiting for their way back home. Their life was dedicated to indetermination because those who had resigned the Iranian citizenship could not have any right to work or buy and sell any property. Armenians, who came to Tehran from different provinces later left for towns and villages of Iran in search of work and lodging. In the 1950s Armenians immigrated only by private visas. This situation continued during the following years until the 1960–1970s when a new phase of repatriation of Armenians began. In 1964 the Iranian government forbade the repatriation of Armenians again. However during the 1960–1970s 24.283 people immigrated from Iran.